ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «24» հունիս 2024 թ.

ՀՐԱՄԱՆ № 181-Ա/Ք

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԿԻՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ԵՎ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի 2024 թվականի մայիսի 13-ի N 149-Ա/Ք հրամանի N 1 հավելվածով հաստատված Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահին կից աշխատանքային խմբի աշխատակարգի 4-րդ, 7-րդ և 8-րդ կետերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. 2024 թվականի հունիսի 27-ին՝ ժամը 14:30-ին հրավիրել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահին կից աշխատանքային խմբի նիստ՝ հետևյալ օրակարգով.

1) գիտական գործուղման ճանապարհածախսը փոխհատուցելու հայտի գնահատման թերթիկի ձևի հաստատում,

2) գիտական միջոցառումների և երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման հայտերի գնահատման թերթիկների ձևերի հաստատում,

3) գիտական գործուղման ճանապարհածախսը փոխհատուցելու՝ բուհերից և գիտական կազմակերպություններից ներկայացված հայտերի գնահատում,

4) գիտական միջոցառումների և երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման՝ բուհերից և գիտական կազմակերպություններից ներկայացված հայտերի գնահատում,

5) գործուղվող գիտաշխատողների գիտական գործուղման ծախսերը հայտատու կազմակերպություններին փոխհատուցելու նպատակահարմարության վերաբերյալ առաջարկության ներկայացում,

6) գիտական միջոցառումների և երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման հայտերը

ֆինանսավորման երաշխավորելու և ֆինանսավորման ծավալների մասին առաջարկության ներկայացում:

2. Նիստը նախագահելը և վարելը հանձնարարել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ Հարություն Սարգսյանին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ